

Դպրոցական առարկայական օլիմպիադաներ
Աստղագիտության աշխատանքների գնահատման ուղեցույց

1. Առաջադրանքի կառուցվածքը.

1.ա. Առաջադրանքը կազմվում է **խնդիր-ենթախնդիր-ենթահարց** (համարակալումը՝ **խնդիր 1, ենթախնդիր 1.1, ենթահարց 1.1.1**) կամ **խնդիր-ենթահարց** (համարակալումը՝ **խնդիր 1, ենթահարց 1.1**) կառուցվածքով.

1.բ. Տարբեր **խնդիրները** կապված չեն: Նույն **խնդրի** տարբեր **ենթախնդիրները** կապված են, իսկ դրանց լուծումները՝ անկախ: Նույն **ենթախնդրի** (կամ դրանց բացակայության դեպքում՝ **խնդրի**) տարբեր **ենթահարցերը** և դրանց լուծումները կապված են.

1.գ. Առաջադրանքում նշվում է յուրաքանչյուր **խնդրի** և **ենթախնդրի** միավորը:

2. Աշխատանքի գնահատումը.

2.ա. Պաշտոնական լուծումներում նշվում են յուրաքանչյուր **ենթահարցի** գնահատման չափանիշները, լուծման յուրաքանչյուր **քայլի** և **վերջնական պատասխանի** համար տրվող միավորները.

2.բ. Աշխատանքները գնահատվում են ըստ գնահատման չափանիշների: Լուծումների այլընտրանքային հատվածները գնահատվում են պաշտոնական չափանիշների այդ հատվածների համար համարժեքորեն կազմված այլընտրանքային չափանիշներով.

2.գ. Բացահայտ չգրված բայց հետագայում օգտագործված **քայլի** միավորը տրվում է ամբողջությամբ, **սխալի** առկայության դեպքում՝ համապատասխան ճշտումով (տես 3-րդ կետը).

2.դ. **Վերջնական պատասխանը բանաձևային տեսքից** և **թվային արժեքից** կազմված լինելու դեպքում միավորի կեսը տրվում է **բանաձևային տեսքի**, կեսը՝ դրա **թվային արժեքի** համար:

2.ե. **ենթահարցը** նվազագույնը գնահատվում է 0 միավոր:

3. Սխալների գնահատումը.

3.ա. Լուծման որևէ **քայլում** կատարած յուրաքանչյուր **աննշան սխալի** (պարզ հանրահաշվական կամ անուշադրական սխալները) համար հանվում է **քայլի** միավորի կեսը.

3.բ. Լուծման որևէ **քայլում** կատարած **փոքր սխալի** (ինչ-որ մեծությունների սխալ մեկնաբանման արդյունքում սխալ բանաձևային տեսք ստանալը (օրինակ՝ \cos / \sin կամ $+$ / $-$ սխալ ընտրությունը), ինչ-որ դեպք հաշվի չառնելը, կամ չափողականության անհամապատասխանության հանգեցրած անուշադրական սխալը, որոնք չեն հանգեցրել խնդրի Եության փոփոխության) **քայլը** գնահատվում է 0 միավոր.

3.գ. Լուծման որևէ **քայլում** կատարած **Էական սխալի** (խնդրի Եությունը փոխած սխալները, կամ եթե սխալ է մեկնաբանվում խնդրում քննարկվող երևույթը) դեպքում **քայլը** գնահատվում է 0 միավոր.

3.դ. **Վերջնական պատասխանի**՝ առանց անհրաժեշտ չափողականության գրված **թվային արժեքը** գնահատվում է 0 միավոր:

3.ե. **Թվային արժեքի**՝ չափից դուրս սխալ ճշտությամբ գրված լինելու (ավելի քան 2 ավելորդ կամ ավելի քան 1 պակասող նշանակալի թվանշան) դեպքում հանվում է դրա միավորի կեսը:

4. Սխալների տարածումը.

4.ա. Եթե լուծման որևէ **քայլում** ստացված արդյունքի սխալը միայն նախորդ **ենթահարցերում** կատարած **սխալների** կամ նախորդ **քայլերում** կատարած **աննշան** կամ **փոքր սխալների** հետևանք է, որոնք Էականորեն չեն պարզեցրել **քայլը**, լրացուցիչ միավոր չի հանվում.

4.բ. Եթե **ենթահարցի վերջնական պատասխանը** ունի չափողականության անհամապատասխանություն, այն գնահատվում է 0 միավոր: Այլ դեպքերում, եթե **վերջնական պատասխանի** սխալը միայն նախորդ **ենթահարցերում** կատարած **սխալների** հետևանք է, դրա համար տրվում է ամբողջ միավորը: Եթե սխալը նույն **ենթահարցի** մեջ կատարած **սխալի** հետևանք է, **վերջնական պատասխանը** գնահատվում է 0 միավոր.

4*. Ավելի ոչ ֆորմալ լեզվով՝ **աննշան** և **փոքր սխալների** համար «պատժվում է» **քայլը** և **ենթահարցի վերջնական պատասխանը**, **Էական սխալների** համար՝ ամբողջ **ենթահարցը**: Կամայական **սխալի** համար «պատժվում են» բոլոր հաջորդիվ Էականորեն պարզեցած **քայլերը**: Չափողականության սխալի համար լրացուցիչ «պատժվում են» բոլոր հաջորդիվ (կապված) **վերջնական պատասխանները**: